ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՏԶՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2026/4

ք. Երևան «03» « 04» 2026թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ջի Թի Էս Քնսթրաքշն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Հակոբյանի ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված *Հայաստանի Հանրապետության «Կոտայքի մարզի Առինջի Կ.Ծառուկյանի անվան միջնակարգ դպրոցի» վերանորոգման* աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար։ Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում *ՀՏԶՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2026/4* ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը։

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան։

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են *ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով՝ շինարարական աշխատանքների կատարման ժամկետը սահմանելով՝ 210 օրացուցային օր :*

*Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով։*

*Ընդ որում համաձայնագրով աշխատանքների կատարման ծավալները նախատեսվում են 12 ամսում կատարելու հաշվարկով՝ պայմանով, որ պակաս ֆինանսական միջոցները բյուջետավորվում և վճարումները կատարվում են 12 ամիսը լրանալուն հաջորդող մինչև 90 օրվա ընթացքում։*

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով։

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար։

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը։

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում։

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

*3.1.8 Առաջարկել Կապալառուին կասեցնել կամ համարել կասեցված պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետի ընթացքը՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն անհնարին դարձնող հանգամանքների առկայության, այդ թվում՝ նախագծային փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտության դեպքում, եթե առանց նախագծային փոփոխությունների իրականացման հնարավոր չէ իրականացնել շինարարական աշխատանքները:*

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել *15 օրվա ընթացքում*: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալառուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

*3.3.3 Առաջարկել Պատվիրատուին կասեցնել կամ համարել կասեցված պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետի ընթացքը՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն անհնարին դարձնող հանգամանքների առկայության, այդ թվում՝ նախագծային փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտության դեպքում, եթե առանց նախագծային փոփոխությունների իրականացման հնարավոր չէ իրականացնել շինարարական աշխատանքները:*

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել

կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

*3.4.11 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը կասեցվելու կամ կասեցված համարվելու դեպքում, եթե Պայմանագրի ժամկետի ավարտի օրը համընկնում է կասեցման ժամանակահատվածի հետ ներկայացնել ավելացված ժամանակահատվածի համար օրենսդրությամբ նախատեսված՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ դրամի ձևով ապահովումները՝ մինչև կասեցումը գործող պայմանագրային ժամկետի ավարտից առնվազն 10 օր առաջ, և եթե կասեցված ժամանակահատվածը չի գերազանցում Պայմանագրի մինչև կասեցումը գործող ժամկետը, ապա կասեցված ժամկետի ընթացքը վերսկսելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:*

**3.4.13 Շինարարական աշխատանքների կատարման ամբողջ ընթացքում շինարարական օբյեկտի տարածքը համալրի տեսախցիկներով, որոնք պետք է շուրջօրյա տեսանկարահանեն ամբողջ շինարարական հրապարակը՝ ընդգրկելով կառուցվող բոլոր տեսակի շինությունները արտաքին բոլոր կողմերից, և այդ տեսախցիկներին հասանելիություն ապահովվի ինչպես պատվիրատուի, այնպես էլ պատվիրատուի նշած օգտատերերի համար:**

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **366,000,000 (երեք հարյուր վաթսունվեց միլիոն)** ՀՀ դրամ, որից **61,000,000 (վաթսունմեկ միլիոն) ՀՀ** դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

Սույն պայմանագրի գինը գործոնային *է: Գործոն է հանդիսանում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից յուրաքանչյուր ամիս՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-րդ օրը, իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվող գնի միջինացված ինդեքսը, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի կողմից նախորդող 12 ամիսների ընթացքում հրապարակված՝ «Գների ինդեքսը շինարարությունում» ինդեքսի միջինացված ցուցանիշը: Գործոնի փոփոխությամբ պայմանավորված՝ սույն պայմանագրի հիման վրա կնքված յուրաքանչյուր համաձայնագրով նախատեսված և պատվիրատուի կողմից ընդունված աշխատանքների գնի վերահաշվարկն իրականացվում և տարբերությունը կապալառուին վճարվում է համաձայնագրով նախատեսված աշխատանքները պատվիրատուի կողմից ողջ ծավալով ընդունվելուն հաջորդող 120 աշխատանքային օրվա ընթացքում: Գործոնը կիրառվում է՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր համաձայնագրով նախատեսված աշխատանքները ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելուն նախորդող ամսվա համար ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված գների ինդեքսի միջինացված ցուցանիշը: Ընդ որում, հաշվարկների համար բազային գործոն է հանդիսանում տվյալ համաձայնագիրը կնքվելուն նախորդող ամսվա համար ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված ինդեքսը: Մինչև համաձայնագրով նախատեսված աշխատանքները ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելուն նախորդող ամիսը ներառյալ, միջինացված ցուցանիշը հավասար մնալու կամ մինչև 5 տոկոսը ներառյալ աճելու, կամ նվազելու դեպքում համաձայնագրի գնի վերահաշվարկ չի կատարվում:*

*5.2 Աշխատանքի գինը գործոնային է և կարող է փոփոխվել պայմանագրի 5.1 կետով նախատեսված կարգով:*

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

**5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝**

**ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).**

**ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.**

**ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.**

**ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:**

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք որի չափը սահմանվում է համաձայնագրով նախատեսված պահանջներին անհամապատասխան կատարված տվյալ կատարողական ակտի ընդհանուր գնի նկատմամբ և կազմում է կատարողականում տվյալ տողի (տողերի) գծով նախատեսված աշխատանքների արժեքի 10%-ը:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

*6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք որի չափը սահմանվում է համաձայնագրով նախատեսված պահանջներին անհամապատասխան կատարված տվյալ կատարողական ակտի ընդհանուր գնի նկատմամբ և կազմում է կատարողականում տվյալ տողի (տողերի) գծով նախատեսված աշխատանքների արժեքի 10%-ը:*

*6.3.1 Պայմանագիրը 3.1.4 կետով նախատեսված կարգով լուծելու դեպքում կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:*

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ: *Ընդ որում կապալառուի կողմից համաձայնագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը խախտելու դեպքում հաշվարկվող տույժերը պակասեցվում են կատարողականի դիմաց վճարվող գումարից՝ պայմանով, որ համաձայնագրով սահմանված աշխատանքների վերջնաժամկետի պահպանման դեպքում պահված տույժերի գումարը վճարվում է:*

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

| N | Խախտումը | Պատասխանատվությունը |
|---|---|---|
| 1 | Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը | նախահաշվային գնի 0,05 % չափով |
| 2 | Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը | նախահաշվային գնի 0,1 % չափով |
| 3 | Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը | նախահաշվային գնի 0,1 % չափով |

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*8.5.1 Թույլատրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշման N 3 հավելվածում ներառված օբյեկտների մասով կնքված պայմանագրերով նախատեսված աշխատանքների ծավալներն ավելացնել պայմանագրի սկզբնական գնի մինչև հիսուն տոկոսի չափով, իսկ աշխատանքները փոխարինել այլ բնութագրեր ունեցող աշխատանքներով պայմանագրի սկզբնական գնի մինչև ութսուն տոկոսի չափով՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջները: Ընդ որում, սույն ենթակետով նախատեսվող փոփոխությունները կարող են կատարվել պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետում՝ մինչև հինգ անգամ, պայմանով, որ ծավալների ավելացման կամ բնութագրերի փոխարինման հանրագումարները չեն կարող գերազանցել սույն ենթակետով սահմանված սահմանաչափերը:*

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը

ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արժանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**8.15 Կողմերի համաձայնությամբ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը կարող է կասեցվել կամ համարվել կասեցված աշխատանքների կատարումն անհնարին դարձնող հանգամանքների առկայության, այդ թվում՝ նախագծային փոփոխություններ իրականացվելու դեպքում, եթե առանց նախագծային փոփոխությունների պայմանագրով սահմանված աշխատանքների կատարումն անհնար է դարձել: Սույն կետի իմաստով՝ կասեցվող ժամանակահատվածը որոշվում է Պատվիրատուի կողմից և դրա մասին կողմերի միջև կնքվում է համաձայնագիր:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները

*«Շինարարության իրականացում»* լիցենզիա, ըստ հետևյալ ոլորտի

| *Չափաբաժինների համարները* | *Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).* |
|---|---|
| *1* | *2* |
| *1* | **Շինարարության իրականացում, 3-րդ և բարձր դասի լիցենզիա, ներդիրով**<br>✓ բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ **3-րդ և բարձր կարգի հավաստագիր**<br>✓ ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա) **3-րդ և բարձր կարգի հավաստագիր**<br>✓ էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատա-կարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ) **3-րդ և բարձր կարգի հավաստագիր**<br>✓ ջերմագազա-մատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր) **3-րդ և բարձր կարգի հավաստագիր** |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Վ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝ 00846441
Հ/Հ՝
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Սարգիս Բադալյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՋԻ ԹԻ ԷՍ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Շիրակի 96

ՀՎՀՀ՝ 02285371
Հ/հ՝ 220098532850000
Բանկ՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Տնօրեն Համիկ Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 1*
*«03» 04. 2026թ. կնքված*
*ՀՏՁՀ-ԴՎՀԲՄ-ԱՇՁԲ-2026/4 ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋԻ Կ.ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ» ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N | Նկարագրություն | Չափման միավոր | Ծավալ նախահաշվ. | Միավորի արժեք (դրամ) | Ընդամենը՝ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Նյութեր | Կատարում | Ընդամենը միավորի գին | |
| | | | A | B | C | B+C | A*(B+C) |
| **1** | **Տանիքի վերանորոգման աշխատանքներ** | | | | | | **31,709,042** |
| 1 | Տանիքի քանդում<br>Տանիքի թիթեղյա ծածկույթի քանդում/ ներառյալ կաթսայատուն/ | մ2 | 1,921.00000 | 116.02 | 0 | 116 | 222,874 |
| 2 | Ձեղնալուսամուտների թիթեղյա ծածկույթի քանդում | մ2 | 35.70000 | 116.02 | 0 | 116 | 4,142 |
| 3 | Ջրհորդանների քանդում | մ2 | 63.90000 | 116.02 | 0 | 116 | 7,414 |
| 4 | Ջրհավաքների քանդում | տեղ | 53.00000 | 279.28 | 0 | 279 | 14,802 |
| 5 | Ձագարների քանդում | տեղ | 53.00000 | 279.28 | 0 | 279 | 14,802 |
| 6 | Ջրահեռացման խողովակների ապամոնտաժում | գմ | 120.00000 | 124.43 | 0 | 124 | 14,932 |
| 7 | Կավարամածի եւ տախտակամածի քանդում | մ2 | 932.00000 | 89.65 | 0 | 90 | 83,554 |
| 8 | Ապամոնտաժված նյութերի և տանիքի աղբի հավաքում, իջեցում տանիքից և դուրս բերում շենքից | տ | 19.00000 | 3,112.47 | 0 | 3,112 | 59,137 |
| 9 | Առաջացած և գոյություն ունեցող շին. աղբի հավաքում, բարձում եւ տեղափոխում 5կմ | տ | 33.50000 | 1,490.18 | 0 | 1,490 | 49,921 |
| 10 | Տանիքի կառուցում<br>Տանիքի ծածկույթի պատրաստում գործարանային գունավոր ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից d=0.5մմ /КП-21-0.5/ ներառյալ կաթսայատուն/ | մ2 | 1,921.00000 | 7,209.96 | 0 | 7,210 | 13,850,333 |
| 11 | Ջրհորդանի իրականացում գործարանային գունավոր ցինկապատ հարթ թիթեղից d=0.5, | գմ | 310.00000 | 6,357.05 | 0 | 6,357 | 1,970,686 |
| 12 | Տանիքի փոքր ծածկույթների պատրաստում 0.5մմ հաստ. հարթ ցինկապատ գունավոր թիթեղից | մ2 | 385.00000 | 4,230.73 | 0 | 4,231 | 1,628,831 |
| 13 | Ջրահեռացման խողովակների տեղադրում գործարանային գունավոր ցինկապատ թիթեղից 80x100մմ, ներառյալ ջրհոս ձագարները, անկյունակները | կ-տ | 53.00000 | 41,347.17 | 0 | 41,347 | 2,191,400 |
| 14 | Փայտանյութի լրացում տանիքի կոնստրուկցիաների համար | մ3 | 16.30000 | 191,323.47 | 0 | 191,323 | 3,118,573 |
| 15 | Կավարամած տեղադրում /տախտակ 50x50մմ/ | մ3 | 9.85000 | 189,546.83 | 0 | 189,547 | 1,867,036 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 16 | Ծպեղնատոքերի կապերի լրացում մետաղալարով Փ2x4մմ պարապետին, կամ ծածկի սալերին | կգ | 60.00000 | 1,127.90 | 0 | 1,128 | 67,674 |
| 17 | Ձեղնապատուհանների պատում ցինկապատ հարթ գործարանային գունավոր թիթեղով d=0.5մմ, S=8x4.5մ2 | մ2 | 39.00000 | 4,230.43 | 0 | 4,230 | 164,987 |
| 18 | Ձեղնապատուհանների պատրաստում շերտափեղկերով | հատ | 8.00000 | 48,367.76 | 0 | 48,368 | 386,942 |
| 19 | Ջերմամեկուսացում խարամի շերտով | մ3 | 334.00000 | 7,385.42 | 0 | 7,385 | 2,466,730 |
| 20 | Ջնարգելքի կառուցում գունավոր | գմ | 310.00000 | 2,977.04 | 0 | 2,977 | 922,882 |
| 21 | Շերտափեղկերի յուղաներկում բարելավված որակի 2 շերտ | մ2 | 10.72000 | 2,236.11 | 0 | 2,236 | 23,971 |
| 22 | Ծխնիներ, փական շերտափեղկերի համար | կ-տ | 12.00000 | 1,586.25 | 0 | 1,586 | 19,035 |
| 23 | Փայտյա կառուցվածքների հրապաշտպանում | մ3 | 35.00000 | 8,091.45 | 0 | 8,091 | 283,201 |
| 24 | Կավարամածի եւ տախտակամածների հրապաշտպանում | մ2 | 1,920.00000 | 262.77 | 0 | 263 | 504,518 |
| 25 | Փայտյա կառուցվածքների մշակում հականեխիչ նյութով | մ3 | 35.00000 | 2,605.30 | 0 | 2,605 | 91,186 |
| 26 | Տանիքի մետաղական ճաղաշարի տեղադրում | մ | 310.00000 | 144.46 | 0 | 144 | 44,783 |
| 27 | Ամրան Փ20 | կգ | 415.60000 | 273.82 | 0 | 274 | 113,800 |
| 28 | Մետաղական ճաղաշարի երկտակ յուղաներկում | մ2 | 35.90000 | 1,302.41 | 0 | 1,302 | 46,757 |
| 29 | Տելեսկոպիկ մետաղական աստիճանի տեղադրում տանիքի մուտքային հատվածում | հատ | 4.00000 | 214,143.35 | 0 | 214,143 | 856,573 |
| 30 | Կավարամածի եւ տախտակամածի մշակում հականեխիչ նյութով | մ2 | 1,920.00000 | 321.65 | 0 | 322 | 617,568 |
| **2** | **Ճարտարապետաշինարարական մաս** | | | | | | **173,990,697** |
| 1 | Քանդման եւ ապամոնտաժման աշխատանքներ Միջնորների քանդում 200մմ հաստության | մ3 | 4.50000 | 9,056.56 | 0 | 9,057 | 40,755 |
| 2 | Միջնորների քանդում 100մմ հաստության | մ2 | 80.50000 | 977.22 | 0 | 977 | 78,666 |
| 3 | Մետաղապլաստե դռների ապամոնտաժում /հանձնում պատվիրատուին/ | մ2 | 217.97000 | 4,289.57 | 0 | 4,290 | 934,998 |
| 4 | Մետաղական դռների ապամոնտաժում /հանձնում պատվիրատուին/ | մ2 | 6.86000 | 4,251.28 | 0 | 4,251 | 29,164 |
| 5 | Մետաղապլաստե պատուհանների ապամոնտաժում, պատուհանագոգով /հանձնում պատվիրատուին/ | մ2 | 382.67000 | 1,392.34 | 0 | 1,392 | 532,807 |
| 6 | Մանրահատակի,լամինատի,ռետինե հատակների ապամոնտաժում | մ2 | 1,157.80000 | 650.38 | 0 | 650 | 753,010 |
| 7 | Փայտե հատակի ապամոնտաժում | մ2 | 683.80000 | 630.64 | 0 | 631 | 431,232 |
| 8 | Փայտե կմախքի ապամոնտաժում | մ3 | 3.62000 | 27,945.67 | 0 | 27,946 | 101,163 |
| 9 | Փայտե շրիշակների քանդում | գմ | 1,398.00000 | 14.21 | 0 | 14 | 19,866 |
| 10 | Կերամիկական սալիկներից հատակների քանդում կապակցող շերտի հետ միասին | մ2 | 138.20000 | 513.37 | 0 | 513 | 70,948 |
| 11 | Գրանիտե սալիկների քանդում իր կապակցող նյութով | մ2 | 56.40000 | 1,281.73 | 0 | 1,282 | 72,290 |
| 12 | Բետոնե հատակների քանդում | մ3 | 338.70000 | 9,016.27 | 0 | 9,016 | 3,053,811 |
| 13 | Յախճապակի քանդում ցեմենտ-ավազային սվաղի հետ միասին | մ2 | 340.80000 | 938.95 | 0 | 939 | 319,994 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 14 | Սանհանգույցի բետոնե թումբերի քանդում | մ3 | 2.80000 | 18,032.55 | 0 | 18,033 | 50,491 |
| 15 | Պատերի և շեպերի գաջե շերտի քանդում/ներկի հետ միասին/ | մ2 | 6,300.00000 | 938.95 | 0 | 939 | 5,915,385 |
| 16 | Ներքին պատերի ցեմենտ ավազե սվաղի քանդում | մ2 | 58.00000 | 222.64 | 0 | 223 | 12,913 |
| 17 | Գաջե սվաղի քանդում առաստաղից/ներկի կետ միասին/ | մ2 | 2,551.20000 | 1,227.86 | 0 | 1,228 | 3,132,516 |
| 18 | Արտաքին պատերի ի ցեմենտ ավազե սվաղի քանդում | մ2 | 125.00000 | 222.64 | 0 | 223 | 27,830 |
| 19 | Կախովի առաստաղի քանդում մետաղական հիմնակմախքի հետ միասին | մ2 | 54.30000 | 813.17 | 0 | 813 | 44,155 |
| 20 | Աստիճանների պողպատե բազրիքների և պատուհանների մետաղական ճաղաշարի ապամոնտաժում | տ | 1.80000 | 41,922.50 | 0 | 41,923 | 75,461 |
| 21 | Յովհարի տանիքի թիթեղյա ծածկույթի քանդում | մ2 | 5.20000 | 116.02 | 0 | 116 | 603 |
| 22 | Յովհարի պողպատե կոնստրուկցիաների քանդում | տ | 0.16000 | 41,922.50 | 0 | 41,923 | 6,708 |
| 23 | Զուգարանակոնքերի ապամոնպաժում | հատ | 15.00000 | 736.03 | 0 | 736 | 11,040 |
| 24 | Լվացարանների ապամոնտաժում | հատ | 15.00000 | 594.55 | 0 | 595 | 8,918 |
| 25 | Յոսակների ապամոնտաժում | հատ | 5.00000 | 666.21 | 0 | 666 | 3,331 |
| 26 | Լուսատուների ապամոնտաժում | հատ | 310.00000 | 337.06 | 0 | 337 | 104,489 |
| 27 | Վարդակների և բաժանիչ տուփերի ապամոնտաժում | հատ | 238.00000 | 120.38 | 0 | 120 | 28,650 |
| 28 | Թուջե խողովակների ապամոնտաժում Փ110 | գմ | 96.00000 | 1,504.38 | 0 | 1,504 | 144,420 |
| 29 | Թուջե խողովակների ապամոնտաժում Փ50 | գմ | 148.00000 | 1,037.43 | 0 | 1,037 | 153,540 |
| 30 | Ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում | հատ | 108.00000 | 1,154.47 | 0 | 1,154 | 124,683 |
| 31 | Ջեռուցման խողովակների ապամոնտաժում | գմ | 1,250.00000 | 407.45 | 0 | 407 | 509,313 |
| 32 | Շին. աղբի հավաքում, բարձում եւ տեղափոխում 5կմ | տ | 686.00000 | 1,490.18 | 0 | 1,490 | 1,022,263 |
| 33 | Միջնորմների կառուցում - Միջնորմերի կառուցում թեթեւաբետոնե բլոկներից 100մմ հաստությամբ | մ2 | 182.00000 | 3,362.32 | 0 | 3,362 | 611,942 |
| 34 | Միջնորմերի կառուցում թեթեւաբետոնե բլոկներից 200մմ հաստությամբ | մ3 | 6.40000 | 23,061.23 | 0 | 23,061 | 147,592 |
| 35 | Միջնորմերի կառուցում թեթեւաբետոնե բլոկներից 400մմ հաստությամբ | մ3 | 4.40000 | 23,061.23 | 0 | 23,061 | 101,469 |
| 36 | Բլոկերի դատարկությունների լցում B7.5 դասի թեթեւ բետոնով | մ3 | 5.60000 | 28,632.10 | 0 | 28,632 | 160,340 |
| 37 | Միջնորմների շարվածքի ամրանավորում | տ | 0.98000 | 71,043.27 | 0 | 71,043 | 69,622 |
| 38 | Ամրան Փ8A500C | տ | 0.98000 | 283,258.40 | 0 | 283,258 | 277,593 |
| 39 | Ե/բ միաձույլ բարավորի պատրաստում B15 դասի բետոնից | մ3 | 1.63600 | 72,932.16 | 0 | 72,932 | 119,317 |
| 40 | Ամրան Փ12A500C | տ | 0.18880 | 273,820.22 | 0 | 273,820 | 51,697 |
| 41 | Ամրան Փ6A240 | տ | 0.04180 | 283,258.40 | 0 | 283,258 | 11,840 |
| 42 | Փրփրապլաստ 20մմ | մ2 | 16.80000 | 292.33 | 0 | 292 | 4,911 |
| 43 | Փրփրապլաստ 30մմ | մ2 | 16.80000 | 326.32 | 0 | 326 | 5,482 |
| 44 | Դահլիճի բեմ - Փայտանյութի լրացում բեմի կոնստրուկցիաների համար և բեմի երեսապատում չոր չորսուներով /հականեխիչ մածկապատմամբ/ | մ3 | 3.58000 | 155,984.66 | 0 | 155,985 | 558,425 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 45 | Բեմի դիմային մասի երեսապատում փայտե սալերով /վագոնկա/ | մ2 | 4.65000 | 4,942.54 | 0 | 4,943 | 22 983 |
| 46 | Բեմի փայտե մասերի լաքապատում 2 շերտ | մ2 | 13.20000 | 673.07 | 0 | 673 | 8 885 |
| 47 | Բացվածքներ - Ալյումինե 60մմ հաստ. պլոֆիլներով ջերմակամրջակով 4+4մմ ապակեփաթեթով արտաքին դռների տեղադրում, /ներառյալ սարքերը, կողպեքները, ապակեփաթեթը/ բացվող | մ2 | 69.94000 | 95,133.49 | 0 | 95,133 | 6,653 636 |
| 48 | ՄԴՖ-ից /ապակիով/ 6մմ հաստ. դռների տեղադրում երկտակ ներկված, ՄԴՖ-ից շրջանակով, ներայլալ՝ ՄԴՖ-ից երեսակալներըարքերը, դռան արգելափակիչը, կողպեքներ, բռնակներ, ծխնիներ ), համաձայնեցնել պատվիրատուի հետ | մ2 | 129.49000 | 39,757.39 | 0 | 39,757 | 5,148 184 |
| 49 | Մետաղապլաստե սպիտակ դռների և միջնորմների տեղադրում /հայկական, ներառյալ սարքերը, կողպեքները/ | մ2 | 22.50000 | 31,435.85 | 0 | 31,436 | 707 307 |
| 50 | Ալյումինե բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ջերմակամուրջով պատուհանների տեղադրում ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր), բացվող | մ2 | 143.60000 | 85,438.77 | 0 | 85,439 | 12,269 007 |
| 51 | Ալյումինե բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ջերմակամուրջով պատուհանների տեղադրում ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր), չբացվող | մ2 | 232.15000 | 46,326.37 | 0 | 46,326 | 10,754 667 |
| 52 | Բարդ փականի եւ սովորականի գնային տարբերությունը | հատ | 96.00000 | 5,665.17 | 0 | 5,665 | 543 856 |
| 53 | Դռան բացող մեխանիզմ "антипаника" DOORLOCK PD910FR-BAR PZ72мм (կամ համարժեք) | հատ | 11.00000 | 50,986.51 | 0 | 50,987 | 560 852 |
| 54 | Գալավարագույրների ձեռքբերում և տեղադրում | մ2 | 460.00000 | 5,665.17 | 0 | 5,665 | 2,605 978 |
| 55 | Հակամիջատային ցանցի տեղադրում | մ2 | 143.60000 | 4,418.83 | 0 | 4,419 | 634 544 |
| 56 | Դռների և պատուհանների շեպերի գաջե սվաղում | մ2 | 168.00000 | 5,395.43 | 0 | 5,395 | 906 432 |
| 57 | Շեպերի ներկում լատեքսային ներկով, ծեփամածկմամբ, լավորակ | մ2 | 168.00000 | 1,065.84 | 0 | 1,066 | 179 061 |
| 58 | Շեպերի հարդարող անկյունակների տեղադրում | գմ | 886.00000 | 158.62 | 0 | 159 | 140 537 |
| 59 | Պատուհանի ճաղաշարի պատրաստում և տեղադրում | տ | 0.62400 | 87,207.78 | 0 | 87,208 | 54 418 |
| 60 | Անկյունակ L 32x32x2 | գմ | 148.80000 | 889.43 | 0 | 889 | 132 347 |
| 61 | Քառակուսի կտրվածքի խողովակ □10x10x2մմ | գմ | 811.20000 | 342.18 | 0 | 342 | 277 576 |
| 62 | Մետաղական մակերևույթների ներկում հակակոռոզիոն ներկով 2 շերտ | մ2 | 128.00000 | 1,276.44 | 0 | 1,276 | 163 384 |
| 63 | Պատուհանագոգերի տեղադրում / բացվածք/ | մ2 | 143.60000 | 830.88 | 0 | 831 | 119 314 |
| 64 | Պլաստմասե սպիտակ պատուհանագոգերի արժեքը B=400մմ | գմ | 321.80000 | 4,169.56 | 0 | 4,170 | 1,341,764 |
| 65 | Սանհանգույցներ - Լամինացված ՄԴՖ-ից դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքները/ | մ2 | 25.40000 | 14,729.44 | 0 | 14,729 | 374,128 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 66 | Լամինացված ՄԴՖ-ից միջնորմների տեղադրում ալյունիե շրջանակով /ներառյալ սարքերը, կողպեքները/ | մ2 | 54.30000 | 7,364.72 | 0 | 7,365 | 399 904 |
| 67 | Հատակներ - Խարամաբետոնե շերտի իրականացում | մ3 | 260.55000 | 7,237.52 | 0 | 7,238 | 1,885 736 |
| 68 | Հարթեցնող շերտի պատրաստում ցեմենտ-ավազային շաղախից 50մմ հաստությամբ, ցանցի տեղադրմամբ /հատակների տակ/ | մ2 | 2,605.50000 | 1,761.34 | 0 | 1,761 | 4,589 171 |
| 69 | Ամրանային ցանցի տեղադրում | տ | 1.51000 | 20,447.65 | 0 | 20,448 | 30 876 |
| 70 | Ամրանային ցանցի արժեքը Φ 3Bpl 200x200մմ բջիջներով | մ2 | 2,605.50000 | 299.69 | 0 | 300 | 780 842 |
| 71 | Հատակների ջրամեկուսացում ջրամեկուսիչ քսանյութով | մ2 | 1,305.00000 | 1,682.77 | 0 | 1,683 | 2,196 015 |
| 72 | Հատակների երեսապատում պրեսգրանիտե սալերով /չսահող/ | մ2 | 723.10000 | 8,100.56 | 0 | 8,101 | 5,857 515 |
| 73 | Պրեսգրանիտե շրիշակների տեղադրում h=80մմ | գմ | 568.00000 | 980.21 | 0 | 980 | 556 759 |
| 74 | Վինիլային ծածկույթի իրականացում 2 մմ հաստությամբ /տարբեր գույների/, ինքնահարթեցվող շերտի հետ միասին | մ2 | 1,737.30000 | 8,906.98 | 0 | 8,907 | 15,474 096 |
| 75 | Շրիշակների պատրաստում ՄԴՖ-ից լամինացված H=80մմ | գմ | 1,180.00000 | 1,341.67 | 0 | 1,342 | 1,583,171 |
| 76 | Դռների ալյումինե շեմեր, փոշեներկված | գմ | 116.00000 | 801.05 | 0 | 801 | 92,922 |
| 77 | Վինիլային հոմոգեն ծածկույթի իրականացում 4 մմ հաստությամբ /տարբեր գույների/, ինքնահարթեցվող շերտի հետ միասին | մ2 | 145.10000 | 14,338.74 | 0 | 14,339 | 2,080,551 |
| 78 | Սպորտ դահլիճի երկտակ գծանշում | գմ | 184.00000 | 163.48 | 0 | 163 | 30,080 |
| 79 | Ֆուտբոլի դարպասների տեղադրում/ցանցով/շարժական/ | հատ | 2.00000 | 172,221.11 | 0 | 172,221 | 344,442 |
| 80 | Աստիճանահարթակների երեսպատում պրեսգրանիտե սալերով /չսահող/ | մ2 | 55.60000 | 8,100.56 | 0 | 8,101 | 450,391 |
| 81 | Աստիճանահատերի երեսպատում աստճանի պրեսգրանիտե սալերով /վալիկավոր, եզրերը կորացված, չսահող/ գործարանային արտադրության | մ2 | 62.00000 | 14,646.73 | 0 | 14,647 | 908,097 |
| 82 | Աստիճանահատերի երեսպատում պրեսգրանիտե սալերով /չսահող/ | մ2 | 27.50000 | 14,646.73 | 0 | 14,647 | 402,785 |
| 83 | Ներքին հարդարում - Պատերի և շեպերի գաջե սվաղում բարելավված որակի | մ2 | 6,300.00000 | 1,734.54 | 0 | 1,735 | 10,927,602 |
| 84 | Պատերի, սյուների և շեպերի ներկում լվացվող լատեքսային ներկով, բարելավված, ծեփամածկումով/ գույնը համաձայնացնել պատվիրատուի հետ/ | մ2 | 6,300.00000 | 2,083.83 | 0 | 2,084 | 13,128,129 |
| 85 | Պատերի սվաղում ցեմենտ-ավազային շաղախով, մետաղական ցանցով | մ2 | 435.00000 | 1,526.83 | 0 | 1,527 | 664,171 |
| 86 | Պատերի երեսապատում հախճասալով /բարձրորակ/ | մ2 | 435.00000 | 5,605.55 | 0 | 5,606 | 2,438,414 |
| 87 | Խողովակների քողարկում ջրակայուն գիպսաստվարաթղթե 12.5մմ հաստ. սալերով, մետաղական հիմնակմախքի պատրաստմամբ | մ2 | 35.20000 | 4,600.58 | 0 | 4,601 | 161,940 |
| 88 | Աստիճանների տակի հատվածպ Քողարկում գիպսաստվարաթղթե | մ2 | 62.50000 | 4,163.97 | 0 | 4,164 | 260,248 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 9.5մմ հաստ. սալերով, մետաղական հիմնակմախքի պատրաստմամբ | | | | | | |
| 89 | Առաստաղի և հեծանների սվաղում գաջով, բարելավված որակի | մ2 | 448.00000 | 1,817.39 | 0 | 1,817 | 814,191 |
